ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 24.02.2026թ. ԹԻՎ 157-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

10.03.2026թ.
ժամը 12:00

Հանձնաժողովի նախագահ
Խ. Սիսակյան ՏԱ տնօրեն
Հանձնաժողովի բացող անդամներ
Վ. Ալթունյան ՏՏ գլխավոր մասնագետ
Հ. Նիկողոսյանա ԱՀ գլխ. մասնագետ
Հանձնաժողովի գնահատող անդամներ
Հ. Սահակյան ՀՀ գլխ. մասնագետ
Հ. Մինասյան ՏՏ ծառայության պետ
Հանձնաժողովի քարտուղար՝
Անահիտ Կարապետյան ՖՀևԳԾ ԳՀԲ գնումների մասնագետ

Օրակարգ

1. ՀԱՆ(1)-ԳՀԱՊՁԲ-06/26 ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատում՝ հրավերով սահմանված կարգով:

Հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին՝ բացառությամբ **<<ՄՄՄ Տեխ>> ՍՊԸ-ի, <<Նեքսա>> ՍՊԸ-ի և <<ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ>> ՍՊԸ-Ի: <<ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ>> ՍՊԸ-Ի կողմից չէր ներկայացվել հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: <<ՄՄՄ Տեխ>> ՍՊԸ-ի և <<Նեքսա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերի՝ հավելված 1.1-ում ներառված 6-րդ չափաբաժնի մասով առկա են անհամապատասխանություններ՝** հրավերով ներկայացրած 6-րդ չափաբաժնում արձանագրված է, որ տպիչ սարքը պետք է օգտագործի **HP 59A (CF259A) կամ 59X (CF259X) քարտրիջներ: <<ՄՄՄ Տեխ>> ՍՊԸ-ի և <<Նեքսա>> ՍՊԸ-ի** կողմից առաջարկվող տպիչներում չեն օգտագործվում վերոնշյալ քարտրիջները:

Արձանագրվեց նաև, որ բոլոր մասնակիցների մասով ուսումնասիրվել են gnumner.am կայքում առկա <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքի չունեցող մասնակիցների>> ցանկը, ինչպես նաև <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց>> ցուցակը և մասնակցելու իրավունքի հետ կապված խախտումներ հայտնաբերված չեն:

Քննարկումների արդյունքում հիմք ընդունելով սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.9 կետը՝

Հանձնաժողովը որոշեց

1. Հանձնաժողովի նիստը կասեցնել և մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով՝ ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել **<<ՄՄՄ Տեխ>> ՍՊԸ-ին, <<Նեքսա>> ՍՊԸ-ին** և **<<ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ>> ՍՊԸ-Ին** առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը(1 աշխատանքային օր) շտկել վերը նշված անհամապատասխանությունը:
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 12.03.2026թ-ին ժամը 16.00-ին:

Հանձնաժողովի նախագահ Խ. Սիսակյան
Հանձնաժողովի անդամ Վ. Ալթունյան
Հանձնաժողովի անդամ Հ. Նիկողոսյան
Հանձնաժողովի անդամ Հ. Սահակյան
Հանձնաժողովի անդամ Հ. Մինասյան
Հանձնաժողովի քարտուղար Ա. Կարապետյան